

**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության մոնիթորինգի արդյունքները**

**Մոնիթորինգի իրականացման հիմքը՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 14-ի №253Ն որոշման հավելվածով հաստատված՝ էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգի իրականացման կարգ, ինչպես նաև հանձնաժողովի 2017 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի 27-րդ կետ

**Մոնիթորինգի օբյեկտը՝** «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն):

**Մոնիթորինգի առարկան՝**

1. Ընկերության կողմից տեղեկատվության հավաքագրման և ներկայացման ընթացակարգի առկայությունը.
2. Ընկերության կողմից տեղեկատվության հավաքագրման գործընթացի իրականացման համապատասխանությունը սահմանված ընթացակարգին.
3. Ընկերության կողմից հավաքագրված և ամփոփված տեղեկատվության համապատասխանությունը հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հետ.
4. Սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների էլեկտրոնային գրանցման ծրագրի ներդրման գործընթացը:

**Մոնիթորինգի նպատակը՝** Ընկերության կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրություն և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողների սպասարկման որակի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» №293Ա որոշմամբ սահմանված

տեղեկատվության ձևերի համապատասխան ներկայացվող տեղեկատվության հավաստիության ստուգում:

**Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝** 2017 թվականի օգոստոսի 7-ից 11-ը:

**Մոնիթորինգի արդյունքները՝**

1. Ընկերությունում ներդրվել է տեղեկատվության հավաքագրման և ներկայացման ընթացակարգը:
2. Ընկերության կողմից տեղեկատվության հավաքագրման գործընթացի իրականացումը համապատասխանում է հրամանով սահմանված ընթացակարգին:
3. 2016 թվականի 4 և 2017 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների համար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումներին վերաբերող հաշվետվություններում հայտնաբերվել է էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների ( այսուհետ՝ ԷՄՕԿ) 28-րդ կետով սահմանված ժամկետների շեղման թվով 48 դեպք, որի համար ընկերությունը պետք է ԷՄՕԿ-ի 77-րդ կետի համաձայն սպառողներին վճարի տույժ:
4. Սպառողների էլեկտրամատակարարման ընդհատումների էլեկտրոնային գրանցման ծրագիրը ընկերության կողմից մշակված է, սակայն ներդրման աշխատանքները ողջ ծավալով դեռևս իրականացված չեն:

Մոնիթորինգի արդյունքներին վերաբերող՝ 2017 թվականի հոկտեմբերի 6-ի №04-ԿՀ-02/3274 գրությամբ Ընկերությունը տեղեկացրել է, որ հանձնաժողովի կողմից իրականացված մոնիթորինգի ընթացքում հայտնաբերված անճշտությունների շտկման արդյունքում, ԷՄՕԿ-ի 77-րդ կետի համաձայն, թվով

21920 սպառողի վճարվել է 26,8 մլն. դրամ տույժ: Հաշվարկված տույժերը ներառվել են սեպտեմբեր ամսվա համար սպառողներին ներկայացվող վճարման փաստաթղթերում: